



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 29-Ն

«25» օգոստոսի 2017 թվական

գյուղ Հայկավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 51-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 5-րդ մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի ավագանին

որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի 2017 թվականի բյուջեի հաստատման մասին» թիվ 51-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Ծախսային մասում

1) Ֆոնդային բյուջեի «Շենքերի և շինությունների կառուցում » 5112 հոդվածի 14000,0 հազար (տասանչորս միլիոն) դրամ թիվը և բառերը փոխարինել 13500,0 հազար (տասներեք միլիոն հինգ հարյուր հազար) դրամ թվով և բառերով:

2) «Վարչական սարքավորումներ» 5122 հոդվածի 1800,0 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) դրամ թիվը և բառերը փոխարինել 2300,0 հազար (երկու միլիոն երեք հարյուր հազար) դրամ թվով և բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ (5)

Դեմ՝ (0)

Ձեռնպահ՝ (0)

Ավետիսյան Մկրտիչ

Բաղդասարյան Սամվել

Եղոյան Սպարտակ

Մանուկյան Աշոտ

Մարտիրոսյան Անդրանիկ

ՀԱՅԿԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *[Signature]* Ս.ՄԻՐԱՅԱՆ

«25» օգոստոսի 2017 թվական

գյուղ Հայկավան



